

ՀԱՅ – ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՄՐԱՊԻ

**Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական
դատավարությունում**

ԺԲ.00.04. «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ – հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան - 2020

РОССИЙСКО – АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

НАЗАРЕТЯН АРТУР СРАПОВИЧ

Проблемы кассационного производства в гражданском процессе РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 – «Судебное право – судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно – розыскной деятельности»

ЕРЕВАН - 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «ԳԼԱՉՈՐ» համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան **Ռ.Գ. Պետրոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս.Շ. Ծաղիկյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ս.Վ. Բարխուդարյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հուլիսի 16-ին՝ ժամը 13:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, Երևան 25, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2020 թվականի հունիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

իրավաբանական գիտությունների թեկնածու


Ջ. Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в Ереванском университете «Гладзор»

Научный руководитель:

доктор юридических наук, профессор, заслуженный юрист
РА **Р.Г.Петросян**

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор

С.Ш. Цагикян

кандидат юридических наук, доцент

С.В. Бархударян

Ведущая организация:

Институт философии, социологии и права НАН РА


Защита состоится 16-ого июля 2020 года в 13:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г.Ереван, ул. Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 6-ого июня 2020 года.

Ученый секретарь специализированного совета,

кандидат юридических наук



Дж.А. Айрапетян

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտման թեմայի արդիականությունը. Ժամանակակից դատավարական իրավունքը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, կազմակերպությունների շահերի դատական պաշտպանության արդյունավետությունը սերտորեն կապում է կատարելագործված օրենսդրության հետ: Իրավական պետության անհրաժեշտ նախադրյալներից են կայացած դատական համակարգը և կատարելագործված դատավարական օրենսդրությունը: Վերջիններս ապահովում են դատական իշխանության մարմինների արդար և անաչառ գործունեությունը, բարձրացնում են արդարադատության արդյունավետությունը, դատարանի նկատմամբ հասարակության վստահության բարձրացումն ու ամրապնդումը:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո վերականգնվեց և օրենսդրորեն ամրագրվեց մասնավոր սեփականության ինստիտուտը, որն իր հերթին պահանջ առաջադրեց բարեփոխել նաև դատական համակարգը, քաղաքացիական դատավարությունն ամբողջությամբ կառուցել մրցակցության սկզբունքի վրա, այդ հենքի վրա վերակառուցել նաև դատական վճիռների և որոշումների վերանայման կարգը: ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների էությունը մարմնավորվեց 1995թ. Սահմանադրության 1-ին և 2-րդ գլուխներում, որոնք վերաբերում են սահմանադրական կարգի հիմունքներին, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին, իսկ դրանց իրականացման սկզբունքներն ու հիմնադրություններն ամրագրվեցին Սահմանադրության 6-րդ (2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի փոփոխություններով 7-րդ) գլխում, որը նվիրված է դատական իշխանությանը:

1998թ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) ընդունմամբ մեզանում ներդրվեց համաշխարհային փորձով արդարացված ավանդական վճռաբեկ վերանայման ինստիտուտը: Վճռաբեկ վարույթի կարգով վճռաբեկ դատարանը ստուգում է ստորադաս (վերաքննիչ) դատարանի վճիռների ու որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունն իրավական առումով, այսինքն և նյութական, և դատավարական նորմերի կիրառման ճշտության տեսանկյունից: Այս փուլի բացառիկությունը կայանում է նրանում, որ վճռաբեկության կարգով կայացվող որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն: Վճռաբեկ դատարանի որոշումները դատական պրակտիկայում ունեն ուղղորդող նշանակություն, իսկ քաղաքացիական դատավարության այս փուլում դատական պաշտպանության իրավունքի իրագործման և արդարադատության մատչելիության հավասար հնարավորության ապահովումը ունի հիմնարար նշանակություն: Չափազանց կարևոր է նաև այն հանգամանքը, որ վճռաբեկ դատարանն այս փուլում կարողանա ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ 1998թ. ՔԴՕ կառուցվածքային և բովանդակային ուսումնասիրությունը և օրենսգրքի կիրառման 20-ամյա պրակտիկան ցույց տվեցին, որ օրենսդիրը այն ժամանակ լրիվ հաշվի չէր առել նոր հասարակարգում քաղաքացիաիրավական հարաբերությունների ու դրանցով ծագող վեճերի որակյալ կարգավորման առաջնայնությունը: Այն լրիվ չէր արտացոլում երկրի ընկերային-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, հետևաբար և՛ նյութական օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում տեղի ունեցող փոփոխությունները: Օրենքը բազմաթիվ հարցերի լուծումը թողել էր դատական

հայեցողության, այսինքն՝ դատական կամայականության կամ դատական նախադեպի, որը ռամանոզերմանական իրավական համակարգում, որին պատկանում է նաև Հայաստանի օրենսդրությունը, այդչափ կիրառելի չէ:

«Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսվեցին դրույթներ՝ ուղղված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Ըստ նշված կարգադրության՝ վճարել վարույթի փուլում դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության ապահովման նպատակով անհրաժեշտ համարվեց.

1. իրականացնել վճարել դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ,
2. ուսումնասիրել վճարել դատարանի կողմից վճարել բողոքի ընդունելիության օրենսդրական չափանիշների, բողոքի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշման բովանդակությանը ներկայացվող պահանջների հարցում միջազգային լավագույն փորձը և ըստ անհրաժեշտության նախապատրաստել վճարել դատարանի սահմանադրական կարգավիճակին համահունչ՝ վճարել բողոքարկման իրավունքի իրականացման ընթացակարգերի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ,
3. տարանջատել և հստակեցնել վճարել բողոքին ներկայացվող ձևական (ֆորմալ) ու բովանդակային պահանջները, ինչպես նաև դրանք չպահպանելու հետևանքները,
4. մշակել դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող այնպիսի պահանջներ, որոնք հնարավորություն կտան այլ դատական ակտերին հղում կատարելիս ապահովել տարբեր գործերի փաստական հանգամանքների համադրելիությունը:

Վերը նշված խնդիրները մասամբ լուծվեցին ՀՀ ՔՂՕ-ում 10.06.2014թ. կատարված փոփոխություններով, սակայն դրանց ամբողջությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը և դրանց լիարժեք կարգավորման անհրաժեշտությունը, ՀՀ 2015թ. Սահմանադրական փոփոխությունները, մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու ՀՀ սահմանադրական դատարանի՝ մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական դատավարության տարբեր ինստիտուտների ելության ու կիրառման (այդ թվում՝ վճարել վարույթի) վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները, ՔՂՕ-ն իրավական տեխնիկայի ներկա պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը հանգեցրին այնպիսի իրավիճակի, որի պարագայում ՀՀ-ում անհրաժեշտ դարձավ մայրցամաքային Եվրոպական իրավական համակարգին լիարժեք համապատասխան նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը:

Վերը նշվածին զուգահեռ ՀՀ կառավարությունը 2017թ. դեկտեմբերի - ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ -Ն- որոշումը, սահմանեց

նշված բարեփոխումների ռազմավարության ընդհանուր նպատակը և ուղղությունները, այդ թվում՝ վարչական և քաղաքացիական արդարադատության արդյունավետության ապահովման, նյութական և դատավարական օրենսդրությունների՝ հասարակական հարաբերությունների զարգացմանը համահունչ

կատարելագործման և նոր օրենսդրության կիրառման արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունը:

Վերը նշված բարեփոխումների ռազմավարությանը, նպատակներին և ուղղություններին համապատասխան մշակված նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվեց 2018թ. փետրվարի 9-ին¹ և գործողության մեջ դրվեց 2018թ. ապրիլի 9-ից: Նոր օրենսգիրքը զգալի չափով վերացրեց քաղաքացիական դատավարության անհստակությունները, կարգավորման բացերը, հասարակական հարաբերությունների՝ արդի հասարակական հարաբերություններին անհամապատասխանությունները և այլն, և որ ամենակարևորն է մեր ատենախոսական թեմայի տեսանկյունից Մահմանադրությամբ ամրագրվեց վճռաբեկ դատարանի նոր մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու գործառույթից բխող իրավանքամեր, հնարավորություն տալով անձանց վճռաբեկ բողոք ներկայացնելու նաև այդ հիմքով, սպառիչ կերպով թվարկեց բողոքն առանց քննության թողնելու, վերադարձնելու և մերժելու հիմքերը: Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի կիրառման արդյունքում, անշուշտ, կստեղծվեն մրցակցության, կողմերի իրավահավասարության, դատավարական իրավունքների չպահպանման անթույլատրելիության, դատավարական խնայողության և գործի ողջամիտ ժամկետում քննության սկզբունքների իրացման նոր նախադրյալներ, սակայն, մեր կարծիքով դատավարական մի շարք հարցերում, այդ թվում՝ վճռաբեկ վարույթի հետ կապված, նոր օրենսգիրքը նույնպես հետագա կատարելագործման կարիք ունի: Մեր ուսումնասիրությունն ուղղված է հենց այդ թերությունների (բացթողումների) բացահայտմանը և համապատասխան առաջարկների մշակմանը:

Թեմայի հետազոտման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ յուրաքանչյուր տարի ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում մուտք են լինում շուրջ երեք հազար վճռաբեկ բողոքներ (2013թ. ստացվել են 3049², 2014թ. 2794³, 2015թ. 2743⁴, 2016թ. 2549⁵, 2017թ. 2880⁶, 2018թ. 2850⁷ բողոքներ), որոնցից վերադարձվել է 2013թ. 2607-ը, 2014թ. 1029-ը, 2015թ. 159-ը, 2016թ. 128-ը, 2017թ. 131-ը, 2018թ. 224-ը, ընդունվել է վարույթ 2013թ. 174-ը, 2014թ. 179-ը, 2015թ. 222-ը, 2016թ. 242-ը, 2017թ. 438-ը, 2018թ. 406-ը, վարույթ ընդունումը մերժվել է 2014թ. 990-ը, 2015թ. 1550-ը, 2016թ. 1377-ը, 2017թ. 1687-ը, 2018թ. 1296-ը, 2014թ. 205, 2015թ. 472, 2016թ. 474, 2017թ. 290, 2018թ. 413 բողոքներ թողնվել են առանց քննության և

¹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 2018թ. փետրվարի 9-ին և գործողության մեջ դրվել 2018թ. ապրիլի 9-ից: Նոր ՔԴՕ-ի նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության կողմից հրապարակվել է 11.01.2016թ.:

² Տես համեմատական վիճակագրական վերլուծություն ՀՀ դատարանների 2012-2013թթ.

գործունեության վերաբերյալ, էջ 20-28, հասանելի է www.court.am/files/news/2864_am.pdf հասցեով:

³ Տես համեմատական վիճակագրական վերլուծություն ՀՀ դատարանների 2013-2014թթ.

գործունեության վերաբերյալ, էջ 18-26, հասանելի է www.court.am/files/news/3388_am.pdf հասցեով:

⁴ Տես համեմատական վիճակագրական վերլուծություն ՀՀ դատարանների 2014-2015թթ.

գործունեության վերաբերյալ, էջ 21-28, հասանելի է www.court.am/files/news/3788_am.pdf հասցեով:

⁵ Տես համեմատական վիճակագրական վերլուծություն ՀՀ դատարանների 2015-2016թթ.

գործունեության վերաբերյալ, էջ 20-28, հասանելի է www.court.am/files/news/4205_am.pdf հասցեով:

⁶ Տես www.court.am/arm/left/statistics/ Համեմատական-վերլուծություն 2016-2017. pdf հասցեով:

⁷ Տես www.court.am/arm/left/statistics/ Համեմատական-վերլուծություն 2017-2018. pdf հասցեով:

անհրաժեշտություն է առաջանում վերլուծել դրանց հետևանքներն ու առաջարկներ անել գործող օրենսդրությունը կատարելագործելու համար:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը. վերջին քսանամյակում հայրենական և արտասահմանյան գիտնականների կողմից զգալի չափով ուսումնասիրվել են դատական իշխանության, քաղաքացիական դատավարության, ինչպես նաև դրա բացառիկ փուլի՝ վճռաբեկության ինստիտուտի հիմնախնդիրները: Հայ հեղինակներից նշանակալից են հատկապես՝ պրոֆեսորներ Ռ.Պետրոսյանի, Ա. Դավթյանի, Ս.Ավետիսյանի, Ս.Դիլբանդյանի, Գ.Դանիելյանի, Գ. Բաղդրյանի, Գ.Հարությունյանի, Ա. Մկրտումյանի, Ա. Ղամբարյանի, դոցենտ Ա.Պողոսյանի և այլոց աշխատությունները:

Քաղաքացիական դատավարության և վճռաբեկության ինստիտուտի հիմնախնդիրները ռուս դատավարագետների լայն քննարկման առարկա դարձան 1860-ականներին, երբ ընդունվեցին Դատական հաստատությունների կանոնադրությունը և Քաղաքացիական դատավարության կանոնագիրքը: Այն ժամանակ վճռաբեկության հիմունքները մշակեցին Ա. Գոլմստենը, Ի. Էնգելմանը, Տ. Յարլոչկովը, Ե. Վասկովսկին, Ե. Նեֆեդը, Յու. Ղամբարյանը (Ղամբարով) և այլք: Նրանց աշխատությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն վերահրատարակվեցին 2005թ. պրոֆ. Մ.Տրեուշնիկովի խմբագրությամբ (տես «Гражданский процесс. Хрестоматия» Под ред. М.К. Треушникова, М., 2005 գրքում) ու դարձան սույն աշխատանքի տեսական հիմքերից մեկը:

Խորհրդային դատավարագիտության մեջ վճռաբեկ վարույթի հիմնախնդիրներն ուսումնասիրել են՝ Ս. Աբրամովը, Մ. Ավդյուկովը, Մ. Գուրվիչը, Ն. Ելիզարովը, Լ. Լեսնիցկայան, Վ. Կալմացկին, Կ. Կոմիսարովը, Մ. Շաքարյանը, Ռ. Ղուկասյանը, Է. Մուրադյանը, Կ. Յուդելտոնը, Վ. Շչեգլովը, Վ.Պուշինսկին, Մ. Տրեուշնիկովը, Պ. Տրուբնիկովը և այլք:

Հետխորհրդային ռուսական քաղաքացիական դատավարությունում վճռաբեկ վարույթի և վճռաբեկության հետ կապված հիմնախնդիրներն ուսումնասիրվել են՝ Ա. Բոնների, Ե. Բորիսովայի, Ա. Գրիցանովի, Ի. Ջայցևի, Գ. Ժիլինի, Վ. Ժույկովի, Մ. Շաքարյանի, Վ. Շերստյուկի, Ն. Չեչինայի, Դ. Չեչուտի, Մ. Տրեուշնիկովի, Դ. Ռեշետնիկովայի, Լ. Տումանովայի, Վ. Հովհաննիսյանի և այլոց աշխատություններում:

Սույն ատենախոսությունը կոչված է բացահայտելու նոր ՔԴՕ-ում մեր կարծիքով՝ առկա բացերն ու թերությունները, առաջարկներ մշակելու վճռաբեկության ինստիտուտի զարգացման և ՀՀ-ում ընթացող իրավական և դատական բարեփոխումների 2018-2023թթ. ռազմավարական ծրագրի դրույթների իրացման համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները. հետազոտության հիմնական նպատակներն են՝ բացահայտել վճռաբեկ վարույթի տեսական և գործնական

խնդիրները, կատարել վճռաբեկ վարույթի փուլում արդարադատության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրների համալիր ուսումնասիրություն, գնահատել դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավական կարգավորման արդյունավետությունը, բացահայտել ու հստակեցնել գործող օրենսդրության ու դատական պրակտիկայի թերությունները, առաջարկներ մշակել վճռաբեկ վերանայման ընթացակարգը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելու համար:

Նշված նպատակներին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- վեր հանել քաղաքացիական դատավարության մեջ դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավական բնույթը՝ դրա ծագման (գենեզիսի) և պատմական զարգացման հետազոտման հիման վրա,

- քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ դատավարական իրավունքի նորմերի վերլուծության միջոցով որոշարկել վճարելիության ժամանակակից ըմբռնումը,

- քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության արդյունավետության տեսանկյունից վերլուծել վճարելի վարույթի էությունն ու նշանակությունը,

- բացահայտել վճարելի վարույթում արդարադատության մատչելիությունն ապահովող օբյեկտիվ, սուբյեկտիվ և ֆորմալ նախապայմանները,

- ուսումնասիրել վճարելի դատարանում գործերի քննության առանձնահատկությունները,

- հիմքեր ստեղծել դատական ակտերի վերանայման համակարգի գործունեության արդյունավետության գնահատման համար,

- մշակել առաջարկներ վճարելի վարույթը կարգավորող օրենսդրության կատարելագործման համար,

- եվրոպական փորձով հիմնավորել քաղաքացիական դատավարությունում դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար վճարելիության ինստիտուտի զարգացման անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտ են այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են դատական ակտերը վճարելիության կարգով վերանայելիս:

Հետազոտության առարկա են հանդիսանում քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերը, որոնք կարգավորում են վճարելիության կարգով դատական ակտերի վերանայման կարգը, ինչպես նաև այն գործոնները, որոնք ազդում են վճարելի վարույթում արդարադատության մատչելիության վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են գիտական ճանաչողության դիալեկտիկական ընդհանուր, նեղ մասնագիտական և հատուկ մեթոդները: Բացի ճանաչողության դիալեկտիկական մեթոդից, աշխատանքում կիրառվել են պատմական, ձևական-տրամաբանական, հասարակագիտական, համեմատական իրավական, համակարգային-կառուցվածքային և անմիջական հետազոտման վերլուծության, իրավաբանական տեխնիկայի, ինչպես նաև դատավարական օրենսդրության և դրա կիրառման գործառության (ֆունկցիոնալ) վերլուծության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, քաղաքացիական և քրեական դատավարության իրավունքներին, դատարանակազմության, արդարադատության սկզբունքներին նվիրված և վերը թվարկված աշխատանքները:

Հետազոտության նորմատիվ հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ դատական օրենսգրքը սահմանադրական օրենքը⁸, ՀՀ քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերը, Դատախազության մասին ՀՀ օրենքը, Փաստաբանության մասին ՀՀ օրենքը, Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքը, այլ

⁸ ՀՀ դատական օրենսգրքը սահմանադրական օրենք: Ընդունվել է 2018թ. փետրվարի 7-ին և որոշակի բացառություններով գործողության մեջ դրվել 2018թ. ապրիլի 9-ից:

նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ մեր կողմից փորձ է արվել համալիր վերլուծության ենթարկել վճռաբեկ դատարանում քաղաքացիական գործերի քննության դատավարական առանձնահատկությունները՝ վճռաբեկ փուլում արդարադատության մատչելիության տեսանկյունից և մշակել ու ներկայացնել սույն ոլորտում կամ դրա հետ կապված այլ ոլորտներում առկա խնդիրների տեսական և գործնական լուծումները:

Մինչհեղափոխական դատավարական մտքի տեսական մշակումների, խորհրդային և ժամանակակից դատավարական դրույթների մեկնաբանման հիման վրա կատարվել է համալիր ուսումնասիրություն քաղաքացիական դատավարությունում դատական ակտերի վերանայման խնդրի վերաբերյալ՝ վերանայման ընթացակարգը կարգավորող օրենսդրության կատարելագործման տեսանկյունից, հիմնավորվել են քաղաքացիական դատավարությունում վճռաբեկ վարույթի իրավական ընթացակարգը կարգավորող նորմերը կատարելագործելու առաջարկները, հաշվի առնելով դատական պաշտպանության իրավունքի միջազգային իրավական պահանջները:

Ըստ սույն աշխատանքի հեղինակի՝ գիտական նորույթ են պարունակում նաև պաշտպանության ներկայացված դրույթները, որոնց մի մասն արդեն մենք հրապարակել ենք մինչև նոր ՔԴՕ ընդունումը և որոնք օրենսդիրն ընդունել է, և որոնց մնացած մասի ներդրման դեպքում, մեր կարծիքով՝ կբարելավվեն ՀՀ քաղաքացիական դատավարության վճռաբեկ ինստիտուտը և դատական պրակտիկան:

Պաշտպանության են դրվում հետևյալ հիմնական դրույթները.

1. ՔԴՕ 119-րդ հոդվածում բացակայում է դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հիմքերը, այսինքն՝ այդ հիմքերի գնահատումը թողնվել է դատարանի հայեցողությանը: Առաջարկում ենք ՔԴՕ 119-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մույն օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետները վերականգնելու միջնորդությունը քննում են առաջին, վերաքննիչ և վճռաբեկ ստյանի դատարանները (ՔԴՕ 119, 362, 391-րդ հոդվածներ) և կարող են վերականգնվել միայն բացառիկ դեպքերում, երբ դատարանը ժամկետը բաց թողնելու պատճառները ճանաչում է հարգելի: Ժամկետը հարգելի կերպով բաց թողնելու հանգամանքները՝ անձի ծանր հիվանդությունը, նրա անօգնական վիճակը, գործուղումը, ողբերգական ընտանեկան իրավիճակը, որն է գործողություն սահմանված ժամկետում կատարելու անհրաժեշտության մասին ոչ ժամանակին տեղեկացվելը և այլ հանգամանքները կարող են ժամկետի վերականգնման հիմք ծառայել դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

1.1 ՔԴՕ 119-րդ հոդվածում նաև չի հիշատակվում, թե բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնումը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկման ենթակա է, թե՛ ոչ: Առաջարկվում է 119-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ պարբերությամբ.

«Բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնումը մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում առանձին ակտի ձևով», որը հիմք կտա գործին

մասնակցող անձանց համոզվելու նման որոշումը վերադասության կարգով բողոքարկելու (ՔԴՕ 199-րդ հոդվ.) իրենց իրավունքի մեջ:

1.2 Օրենսդիրը ՔԴՕ 361-րդ հոդվածում դատավարական բաց թողնված ժամկետների վերականգնումը մերժող դատական ակտի բողոքարկում չի նախատեսում, մինչդեռ նման որոշումը էականորեն սահմանափակում է շահագրգիռ անձի իրավունքը վերջինիս պաշտպանության առումով:

Առաջարկում ենք ՔԴՕ 361-րդ հոդվածի 1-ին մասի հենց 1-ին կետը ձևակերպել հետևյալ բովանդակությամբ.

«1) հայցադիմումի ընդունումը և բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնումը մերժելու մասին որոշումները»:

2. ՔԴՕ 6-րդ հոդվածի համաձայն դատական ակտը պետք է լինի օրինական, ինչպես նաև հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ նոր ՔԴ օրենսգրքով: Քանի որ օրինական և հիմնավորված դատական ակտը իրավապահական, իրավակիրառ, նախականիսիչ և դատտիարակչական կարևոր ակտ է, դրա և փաստական, և իրավական հիմնավորվածությունն ունի հիմնարար նշանակություն, իսկ օրենսդիրը հիմնավորվածության վերը նշված կանոնները չպահպանելու հետևանքով դատական ակտն անհիմն դարձնող հիմքերը վերաքննիչ վարույթին վերաբերող գլխում չի թվարկել, ուստի, համաձայնվելով ՔԴՕ 365-րդ հոդվածում դատական ակտերի բեկանման թվարկված հիմքերի հետ, առաջարկում ենք այդ հոդվածի 2-րդ մասը լրացնել բեկանման ևս երեք հիմքերով՝ հետևյալ շարադրամքով.

«13)դատարանը սխալ է որոշել կամ ոչ լրիվ է պարզել գործի լուծման համար իրավաբանական նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը.

14)դատարանը սխալ է գնահատել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (փաստերը) կամ դրանք սպացուցել է օրենքով չթույլատրված կամ դատական նիստում չհետազոտված, կամ էլ՝ ոչ արժանահավատ, գործի մյուս տվյալների հակասող սպացույցներով.

15)դատարանի վճռում շարադրված եզրահանգումները չեն համապատասխանում գործի՝ դատական նիստում պարզված հանգամանքներին»:

2.1 ՔԴՕ 365-րդ հոդվածի 8-րդ կետում առաջարկվում է որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք դիտարկել ***«գործի քննության ընթացքում չի սպառնվել գործին մասնակցող անձի՝ թարգմանիչ ունենալու իրավունքը»:***

Վերը նշվածը մենք համարում ենք նաև մեր ներդրումը վճռաբեկ վարույթի կատարելագործման հարցում, որովհետև այդ նույն դրույթը մենք առաջարկել և հրապարակել ենք դեռևս մինչև նոր նախագծի հրապարակումը (տե՛ս Նազարեթյան Ա. Ս. Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի բեկանման հիմքերը, Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր, 11-12/197-198, Երևան, 2015, էջ 110):

2.2 ՔԴՕ 365-րդ հոդվածի 10-րդ կետով առաջարկվում է որպես բեկանման հիմք ընդունել նաև ***«դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վրա, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն նա չի ցանկացել ներգրավվել գործին»*** կապակցությունը (ընդգծումը մերն է՝ հեղ.), որը ևս մենք համարում ենք մեր ներդրումը, քանի որ ճիշտ նույն դրույթը մենք առաջարկել ենք վերը նշված հոդվածում (տե՛ս Նազարեթյան Ա. Ս. Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի բեկանման հիմքերը, Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր, 11-12/197-198, Երևան, 2015, էջ 109):

3. Բողոքարկման սուբյեկտիվ իրավունքը դատական պաշտպանության իրավունքի համակցված տարրերից է, ուստի մեր կարծիքով բողոքարկման սուբյեկտների շրջանակը չպետք է սահմանափակվի որևէ հատկանիշով: Ռոպեսզի վճռաբեկ դատարանը բողոքն ընդունի վարույթ, դիմողին բավարար է միայն վկայակոչել բողոքարկվող որոշմամբ իր իրավունքների խախտման փաստը: Մինչդեռ ՔԴՕ 389 հոդվածը վճռաբեկ բողոքարկման սուբյեկտների թվին է դասում միայն գործին մասնակցող անձանց, գլխավոր դատախազին և նրա տեղակալներին: ՔԴՕ-ով բողոքարկման իրավունքի սուբյեկտ են համարվում նաև գործին մասնակից չդարձված անձինք, որոնք իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշման, իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա հարուցված վերաքննիչ վարույթը կարճելու կամ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների, ինչպես նաև սույն օրենսգրքի 383-րդ և 384-րդ հոդվածներով նախատեսված հարցերով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումների դեմ:

Ինչպես երևում է ՔԴՕ 389-րդ հոդվածի 3-րդ կետից, սուբյեկտների ցանկում բացակայում է գործին ընդհանրապես մասնակից չդարձված (գործից անտեղյակ) անձանց մասին հիշատակումը, որը սահմանափակում է դատական պաշտպանության իրավունքի իրագործումը: Օրենսդիրը նման իրավունք է վերապահել ոչ թե գործին ընդհանրապես մասնակից չդարձված անձանց, այլ գործին, այսինքն՝ իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքով նիստին մասնակցող կամ չմասնակցող անձանց: ***Մենք առաջարկում ենք այս ձևակերպումը վերագրել գործին ընդհանրապես մասնակից չդարձված և ոչ թե իրենց կողմից ներկայացված վերաքննիչ բողոքով դատական նիստին փաստորեն չմասնակցած անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել են դատական ակտերը:*** Մեր համանման առաջարկը արվել և հրապարակվել է դեռևս 2015թ-ին (տե՛ս Նազարեթյան Ա.Ս. Վճռաբեկ վարույթի սուբյեկտները, Вестник РАУ, Ереван, 2015, էջ 117), ուստի ՔԴՕ 389 հոդվածի թեկուզև ոչ լիարժեք այս

ձևակերպումը մենք համարում ենք նաև մեր ներդրումը վճռաբեկ վարույթի զարգացման մեջ: ՀՀ սահմանադրական դատարանի 04.10.2016թ. ՍԴՈ-1310 որոշման և Վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. քաղաքացիական թիվ 03-2071 գործով որոշումների պահանջներին համապատասխան օրենսդիրն այդ ցանկում պետք է **ներառի նաև գործին չմասնակցող անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է եզրափակիչ դատական ակտ:**

Մեր առաջարկն ընդունելու դեպքում ՔԴՕ 389-րդ հոդվածը մասնավորապես կստանա հետևյալ տեսքը.

«Հոդված 389. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք

1.....

2...

3) **Գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է եզրափակիչ դատական ակտ:**

4) **Գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, վճռաբեկ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները»:**

4. Վճռաբեկ բողոքարկման իրավունքը դատական պաշտպանության իրավունքի համակարգված տարրերից մեկն է, որն ապահովում է այդ իրավունքի իրագործման հուսալի երաշխիք և իրականացման անհրաժեշտ պայման: ՔԴՕ 390-րդ հոդվածը սահմանափակում է այդ իրավունքի իրականացման հնարավորությունը, ըստ որի անձը չի

կարող դատական ակտը բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա եզրափակիչ դատական ակտը նույն հիմքերով չի բողոքարկել վերաքննիչ դատարանում: Դատավարության բոլոր մասնակիցների դատական պաշտպանության իրավունքի իրագործման հավասար հնարավորության ապահովման նպատակով առաջարկում ենք վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը կարգավորող ՔԴՕ 394-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր դատարանի կողմից հարգելի ճանաչված հիմքով, ըստ որի վճռաբեկ բողոքը քննվում է նաև այն դեպքում, երբ՝ **«Առերևույթ առկա է, որ գործին մասնակցող անձինք օբյեկտիվ պատճառներով գրկված են եղել անհրաժեշտ ապացույցները վերաքննիչ դատարան ներկայացնելու հնարավորությունից»:**

Մեր կարծիքով նման նորմ ընդունելու դեպքում վճռաբեկ դատարանը մեկ հիմք ևս կունենա վճիռը բեկանելու և գործը նոր քննության վերադարձնելու համար: Օրինակ՝ երբ վճիռ կայացնելուց հետո դատախազության կազմած նյութերով է պարզվել բողոք բերող անձի պահանջները կամ առարկությունները հիմնավորող ապացույցի գոյությունը:

Օրենսգիրքը չի նախատեսում նոր ապացույց ձեռք բերվելու դեպքում գործը նոր հանգամանքներով նորոգելու ինստիտուտ, հետևաբար նոր ապացույցը նոր վճռաբեկ բողոքի հիմք է հանդիսանում:

5. ՔԴՕ 396-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել: Մինչդեռ եթե նույն գործով հաջորդ բողոք բերողը առաջադրի նոր հիմնավոր փաստարկներ, ապա նա կհանդիպի օրենսդրական սահմանափակման, որը, մեր խորին համոզմամբ, անթույլատրելի է: Դա սահմանափակում է բողոք բերողի դատական պաշտպանության իրավունքը: Առաջարկվում է նշված հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը լրացնել **«բացառությամբ այն դեպքերի, երբ նույն գործով հաջորդ վճռաբեկ բողոք բերողը առաջադրում է նոր հիմնավոր փաստարկներ»** նախադասությամբ:

6. ՔԴՕ 401-րդ հոդվածի համաձայն վճռաբեկ բողոքի քննությունը կարող է իրականացվել նաև դատական նիստում, եթե վճռաբեկ դատարանը գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

«Մենք առաջարկում ենք բողոքը դատական նիստում քննել նաև գործին մասնակցող անձանց միջնորդության հիման վրա»:

Գործին մասնակցող անձանց նման միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը ստիպված կլինի խորապես պատճառաբանել իր մերժումը, որը կբարձրացնի անձանց վստահությունը գործի արդար քննության վերաբերյալ:

7. ՔԴՕ-ն չի սահմանում, թե ինչպես պետք է վարվի վճռաբեկ դատարանը, եթե անհրաժեշտ է կասեցնել գործի վարույթը առաջին ասյանի դատարանում վարույթի կասեցման համար սահմանված հիմքերով: Առաջարկում ենք ՔԴՕ-ն լրացնել 402.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 402.1 Վճռաբեկ բողոքի քննության կասեցումը

ՔԴՕ 157 հոդվածով նախատեսված գործի վարույթի կասեցման հիմքերի առկայության դեպքում վճռաբեկ դատարանը կասեցնում է վճռաբեկ վարույթը և ղեկավարվում է ՔԴՕ 158-160 հոդվածներով սահմանված կանոններով»: Մեր կարծիքով սա կնպաստի վճռաբեկ դատարանում դատական պաշտպանության իրավունքի առավել ամբողջական իրագործմանը:

7.1 Հնարավոր են նաև դեպքեր, երբ վճռաբեկ դատարանում անհրաժեշտություն է առաջանում հետաձգել գործի քննությունը: Գործի քննության ժամանակ գործին մասնակցող անձանց դատարանի կողմից կարող են հարցեր տրվել, որը կարող է էական

նշանակություն ունենալ գործի քննության համար: Գործին մասնակցող անձանց բացակայությունը կարող է բացասաբար ազդել գործի վճարելի քննության վրա: Երբեմն էլ գործին մասնակցող անձինք կարող են միջնորդել վճարելի դատարանին հետաձգելու գործի քննությունը: Նման իրավիճակների հաշվառման նպատակով առաջարկում ենք ՔԴՕ 402 հոդվածում կատարել լրացում 1.1 կետի տեսքով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հարգելի հիմքերի կամ կողմերի համապատասխան միջնորդության առկայության դեպքում վճարելի դատարանը պարտավոր է հետաձգել գործի քննությունը»:

8. Գտնում ենք, որ երբ վճարելի դատարանը բացահայտում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ, որոնք վկայում են որպես իրավական ակտ որոշման առոչինչ լինելու մասին, կամ գործի նյութերը վկայում են սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման մասին, ապա պետք է ՔԴՕ 404-րդ հոդվածով վճարելի դատարանին իրավունք վերապահել ***«օրինականության շահերից ելնելով դուրս գալ բողոքի փաստարկների սահմաններից և դատական ակտը ստուգել ողջ ծավալով»:*** Այս նույն կապակցությամբ առաջարկում ենք ՔԴՕ 405-րդ հոդված 1-ին մասը լրացնել 2.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1 Բեկանել կամ փոփոխել առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի դատական ակտը և ընդունել նոր դատական ակտ, գործը չհանձնելով լրացուցիչ

քննության, եթե սխալ է թույլ տրվել նյութական իրավունքի կիրառման կամ մեկնաբանման հարցում»: Այս առաջարկները, իհարկե, կփոխեն քաղաքացիական դատավարության բնույթը և այն կդարձնեն դատական ակտերի ստուգման ռեիզիոն կարգ: Նոր ՔԴՕ-ն չի անդրադարձել այս հարցին, բայց իրավացիորեն այս տեսակետի կողմնակիցն է նաև իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, իրավաբանական գիտական աստիճաններ շնորհող ԲՈԿ-ի Օ63 մասնագիտական խորհրդի նախագահ Ս. Ավետիսյանը (տե՛ս www.lin.am առաջին լրատվականի 28.09.2017թ. հարցազրույցը):

8.1 Պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ տարբեր կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց աշխատանքում հայտնաբերվում են էական թերություններ, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների խախտումներ, գործող օրենքների անտեսում և այլ բացասական երևույթներ: Արդարադատության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք ՔԴՕ 405-րդ հոդվածում ՌԴ ՔԴՕ 226 և ՀՀ քր. դատ. օր. 360.1 հոդվածների նմանությամբ կատարել լրացում նոր հոդվածով, այն շարադրելով հետևյալ կերպ՝

«Հոդված 405.1 Լրացուցիչ որոշում կայացնելը

Օրինականության խախտման դեպքեր հայտնաբերելիս վճարել դատարանը կայացնում է լրացուցիչ որոշում և այն ուղարկում է համապատասխան կազմակերպություններին ու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են մեկ ամսվա ընթացքում հարթել օրինականության խախտման իրավական հետևանքները»:

8.2 Մեր կարծիքով ՔԴՕ 405-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախևառաջ ունի հստակեցման կարիք այն հարցում, թե որ դեպքերում է կարճվում գործով վարույթը կամ հայցն առանց քննության թողնվում: Առաջարկում ենք ՔԴՕ 405-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նոր պարբերության ավելացումով կատարել լրացում հետևյալ շարադրանքով.

«Սույն օրենսգրքի 180-րդ և 182-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի ասկայության դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը»:

Պաշտպանության դրվող դրույթները մշակելիս հայցորդը ղեկավարվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով և ՀՀ վճարել դատարանի բազմաթիվ

նախադեպերով, որոնք վերաբերում են վճռաբեկ վարույթին: Ատենախոսն իր առաջարկները հիմնավորել է նաև նշված որոշումների դրույթների վերլուծություններով:

Հետազոտման արդյունքների տեսական նշանակությունը. ատենախոսության մեջ ձևակերպված տեսական դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել քաղաքացիական դատավարության տեսության մեջ վճռաբեկ վարույթի խնդիրների հետագա գիտական մշակման համար: Հետազոտության նյութերը կարող են օգտակար լինել նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում վճռաբեկ վարույթի փուլը դասավանդելիս, քաղաքացիական դատավարության իրավունքի վերաբերյալ մեթոդական և ուսումնական ձեռնարկներ կազմելիս, ինչպես նաև կարող են տեսական հիմք ծառայել ժամանակակից քաղաքացիական դատավարությունում վճռաբեկության ինստիտուտի իմաստն ու բովանդակությունը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսության մեջ ձևակերպված եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել օրինաստեղծ գործունեության մեջ՝ քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կատարելագործման ժամանակ բացահատված բացթողումներն ու թերությունները հարթելու, վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման, իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ դատական պաշտպանության ապահովման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Ատենախոսությունը պատրաստվել է քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակվել են թվով 14 գիտական հոդվածներում և զեկուցվել են Հայ-Ռուսական համալսարանի 2013, 2014 թվականների 8-րդ և 9-րդ տարեկան գիտաժողովներում: Մեր առաջարկներից 3-ն արդեն իսկ ներառվել են մեր պաշտպանության դրվող դրույթների 2.1, 2.2, 3 կետերը և դրանց վերաբերյալ ատենախոսությանը կցվել են 1-ին և 2-րդ հավելվածները):

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը կազմված է ներածությունից, չորս գլխից, որոնք ներառում են տասներկու ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, դրա գիտական մշակվածության աստիճանը, տեսական, նորմատիվ, փորձառական, մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ձևակերպվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Վճռաբեկ վարույթի ձևավորման փուլերը» վերաառությամբ, ունի 2 ենթագլուխ, որոնք վերաբերում են վճռաբեկ վարույթի ծագմանը և զարգացմանը, ՀՀ-ում վճռաբեկ ինստիտուտի վերականգնման նախադրյալներին:

Առաջին գլխի «Վճռաբեկ վարույթի ծագումը և զարգացումը» 1-ին ենթագլխում հանգամանորեն քննարկվում է վճռաբեկ վարույթի ծագման և զարգացման համառոտ

պատմությունը: Վճռաբեկության ինստիտուտի իմաստին անդրադարձ է կատարվել նաև Հին Հռոմում, իսկ ապա՝ միջնադարում:

Հեղինակը պատմականության սկզբունքի (մեթոդի) կիրառմամբ ներկայացնում է այս ինստիտուտի պատմությունը, դերը, ձևավորման առանձնահատկությունները Ֆրանսիայում, կայսերական Գերմանիայում, Ցարական Ռուսաստանում և նրա կազմի մեջ գտնված Արևելյան Հայաստանում, մանավանդ որ նույն այդ ինստիտուտի բարելավված տարբերակը կիրառվել է նաև Հայաստանի Առաջին Հանրապետությունում: Այնուհետև անդրադարձ է կատարվել Խորհրդային Հայաստանում հիշյալ ինստիտուտը վերացնելու, բայց դրա էությունը վերաքննության վարությամբ փաստորեն պահպանված լինելու հարցին:

Առաջին գլխի «Վճռաբեկ ինստիտուտի վերականգնման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում» 2-րդ ենթագլխում հանգամանորեն վերլուծության են ենթարկվել ՀՀ գործող օրենսդրության մեջ վճռաբեկ վարույթի վերականգնման նախադրյալները, որոնք կապված են հասարակական նոր կեցության, տնտեսական հարաբերությունների զարգացման, անձի պաշտպանության իրավական միջոցների կատարելագործման և այլ գործոնների հետ:

Հայրենական և արտասահմանյան իրավաբանական տեսական գրականության, այդ թվում՝ նախահեղափոխական և խորհրդային ժամանակաշրջանների դատավարագետների դատադրությունների հիման վրա հեղինակը խորհրդային շրջանի վճռաբեկ հասկացությունը հակադրել է այսօր գործող վճռաբեկ վարույթին, թվարկել և համառոտակիտորեն վերլուծել է իրական վճռաբեկ վարույթի վերականգնման տնտեսական, իրավական և քաղաքացիական ու միջազգային նախադրյալները և հիմք է ստեղծել վճռաբեկ վարույթի հետագա հարցերին անդադառնալու, վերականգնված պատմական վճռաբեկ վարույթի էության մեկնաբանման համար:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Դատական ակտերի վերանայումը վճռաբեկության կարգով», բաղկացած է վեց ենթագլուխներից, որոնցում քննարկվում են վճռաբեկ բողոքարկումը որպես դատական պաշտպանության իրականացման երաշխիք, վճռաբեկ վարույթի սուբյեկտները, վճռաբեկ բողոքարկման օբյեկտները, բողոքարկման ժամկետները, բողոք ներկայացնելու կարգը, վճռաբեկ դատարանի կողմից գործը դատական քննության նախապատրաստելու հարցերը:

«Վճռաբեկ բողոքարկումը որպես դատական պաշտպանության իրականացման երաշխիք» երկրորդ գլխի 1-ին ենթագլխում քննարկվում է վճռաբեկ փուլում դատական պաշտպանության իրականացման հիմնարար և կենսական նշանակությունը, որն իր հերթին երաշխիք է քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործում:

Քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ամենատարածված եղանակը դատական պաշտպանությունն է, իսկ եռաստիճան դատական համակարգում վճռաբեկ դատարանի առաջատար դերն ընդգծված է սահմանադրորեն: ՀՀ սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ 1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, 2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Վերլուծության է ենթարկվել վճռաբեկ վարույթի նշանակությունը քաղաքացիների սահմանադրական և օրենսդրությամբ նախատեսված իրավունքների պաշտպանության գործում, շարադրվել է վճռաբեկ վարույթի համառոտ պատմությունը և դրան վերաբերող գործող օրենսդրական նորմերը, արվել է ուշադրության արժանի առաջարկ գործող օրենքը կատարելագործելու մասին:

Երկրորդ գլխի «Վճարելի վարույթի սուբյեկտները» 2-րդ ենթագլխում քննարկվել է վճարելի վարույթում քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը:

Վճարելի վարույթում ստուգվում է վերաքննիչ դատարանի՝ եզրափակիչ, ինչպես նաև միջանկյալ դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը: ՀՀ և ՌԴ օրենսդրության իրավահամեմատական վերլուծության հիման վրա պարզաբանվել են վճարելի վարույթի սուբյեկտների հասկացության, ցանկի և վերջինիս ընդլայնման հարցերն այն հաշվով, որ հնարավոր դառնա իրականացնել գործին մասնակցող (նաև՝ չմասնակցող) անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Արվել են նաև դատավարության օրենքը կատարելագործելու առաջարկներ:

Երկրորդ գլխի 3-րդ ենթագլխում, որ կրում է «Վճարելի բողոքարկման օբյեկտները» վերտառությունը, վերլուծվում են վերաքննիչ դատական ակտերի վճարելի բողոքարկման օբյեկտներին առնչվող հարցերը:

Մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտերի բողոքարկման շուրջ հայրենական և արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ առկա գիտական վեճերը և արվել են որոշակի եզրահանգումներ: Արված առաջարկներն ուղղված են վճարելի բողոքարկման օբյեկտների ընդլայնմանը:

Երկրորդ գլխի «Վճարելի բողոքարկման ժամկետները» 4-րդ ենթագլխում հանգամանորեն քննարկվում են դատավարական ժամկետների էությունն ու նշանակությունը քաղաքացիական գործերը վճարելի փուլում ճիշտ և ժամանակին քննելու և լուծելու գործում, հաշվի առնելով, որ քաղաքացիների և կազմակերպությունների սոցիալ-նյութական, քաղաքական, մշակութային, գույքային և անձնական բազմատեսակ ու բազմաթիվ իրավունքների և ազատությունների դատական արդյունավետ պաշտպանությունը մեծապես կախված է այդ իրավունքներին ու ազատություններին վերաբերող վեճերը ժամանակին քննելուց և խախտված իրավունքը վերականգնելուց:

Հայ և օտարերկրյա իրավագետների կարծիքների և գործող օրենսդրության համապատասխան նորմերի վերլուծության հիման վրա հանգել ենք առաջարկների, որոնք կարող են ներդրվել ինչպես ընդհանուր դատավարական, այնպես էլ վճարելի բողոքարկման ժամկետներին վերաբերող դատավարական ակտերում, ավելի կոնկրետ՝ բողոքներ բերելու, դրանք ընդունելու, բաց թողնված ժամկետները երկարաձգելու, վերականգնելու նորմերում:

Երկրորդ գլխի «Վճարելի բողոք ներկայացնելու կարգը» 5-րդ ենթագլխում տրվել է վճարելի բողոք ներկայացնելու կարգը. վերաքննիչ որոշումների բողոքարկման ժամկետները, բողոքի բովանդակությունը, դրան կցվող փաստաթղթերի ցանկը, բողոքարկման հիմքերը, բողոքը վերադարձնելը, բողոքի վարույթ ընդունումը մերժելը:

Ընդգծվել է, որ վերաքննիչ դատարանի դատական ակտերի վճարելի բողոքարկումը լրացուցիչ երաշխիք է դրանց օրինականությունը և հիմնավորվածությունն ապահովելու համար: Երկու առաջարկներ են արվել վճարելի վարույթի օրենսդրական կատարելագործման ուղղությամբ, որոնք վերաբերում են վճարելի բողոքը վերադարձնելուն և բողոքի վարույթ ընդունումը մերժելուն:

Երկրորդ գլխի «Վճարելի դատարանի կողմից գործը դատական քննության նախապատրաստելը» 6-րդ ենթագլխում վերլուծվել են դատարանի կողմից գործը դատական քննության նախապատրաստելու գործողությունները:

Նախապատրաստումը դատավարության ինքնուրույն փուլ է, որի նպատակն է գործի արագ և ճիշտ քննության անցկացումը մեկ դատական նիստում: Ղեկավարվելով ՀՀ

ՔԴՕ համապատասխան նորմերով և ուսումնասիրելով հայրենական ու արտասահմանյան իրավաբանական գրականությունը, ոչ միայն վերլուծվել են նախապատրաստման փուլի էությունը, նպատակները և խնդիրները, այլև արվել են ՀՀ ՔԴՕ նորմերը կատարելագործելու առաջարկներ:

«Վճռաբեկ դատարանում գործերի քննության առանձնահատկությունները» 3-րդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում քննարկվում են վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը, վճռաբեկ դատարանի լիազորությունները, վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի բեկանման հիմքերը:

Երրորդ գլխի 1-ն ենթագլխում, իր առջև դրված նպատակներին համահունչ, հեղինակը հայրենական և արտասահմանյան, հատկապես՝ ռուս դատավարագետների կարծիքների վերլուծման արդյունքում ներկայացրել է վճռաբեկ բողոքարկման, բողոքն ընդունելու, քննության նախապատրաստելու, իսկ անհրաժեշտ հիմքերի առկայությամբ՝ գործի քննությունը կասեցնելու և հետաձգելու կարգը, ինչպես նաև անդրադարձել է գործի քննության սահմաններին և արել է օրենսդրությունը կատարելագործելու առաջարկներ:

Երրորդ գլխի 2-րդ ենթագլխում, հենվելով իրավաբան գիտնականների և ՀՀ գործող օրենսդրության վերլուծությունների վրա, տրվել է վճռաբեկ դատարանի լիազորությունների նեղ և լայն ըմբռումներ, շարադրվել է այդ լիազորությունների բովանդակությունը, և որ ամենակարևորն է՝ արվել է վճռաբեկ դատարանի լիազորություններն ընդարձակելու մասին առաջարկներ, որոնք վերաբերում են վճռաբեկ դատարանի կողմից գործի վարույթի կարճմանը, առանց քննության թողնելուն, և նրան լրացուցիչ որոշումներ կայացնելու իրավունքով օժտելուն:

Աշխատանքի 3-րդ գլխի երրորդ ենթագլխում հանգամանորեն քննարկվել են դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման հիմք հանդիսացող հանգամանքները՝ ստորադաս (վերաքննիչ) դատարանի կողմից կայացված ակտերի անօրինակասությունը, հիմնավորված և պատճառաբանված չլինելը, մեկնաբանված են դրանց ենթահիմքերն ու իրավաբան գիտնականների կարծիքները:

Դատական ակտերի բեկանման հիմքերը խիստ արդիական են այն իմաստով, որ ՀՀ վճռաբեկ դատարանը գործին մասնակցող անձանց, և/կամ ՀՀ դատախազության համապատասխան պաշտոնատար անձանց բողոքներով վերանայում է ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումները, որոնք շոշոփում են քաղաքացիների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներն ու իրավաբանական անձանց շահերը: Հեղինակը ոչ միայն վերլուծել ու մեկնաբանել է վճռաբեկության հիմքերը, այլև ՀՀ և արտասահմանյան գրականության մեջ կատարված ու իր ամփոփմամբ ավարտված առաջարկներ է արել ՀՀ ՔԴՕ 365-րդ հոդվածը 3 կետերով լրացնելու վերաբերյալ:

«Վճռաբեկ վարույթի նպատակները և խնդիրները ըստ ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի» վերաառությամբ 4-րդ գլխում անդրադարձ է կատարվել վճռաբեկ բողոքը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ դատական նիստում քննելու հարցին, որի կապակցությամբ ներկայացվել է համապատասխան առաջարկ պաշտպանության դրվող դրույթի տեսքով:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա ատենախոսը հանգել է հետևյալ **եզրակացությունների**.

1. 1998թ. հունիսի 17-ին ընդունված և 1999թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20-ամյա կիրառման ընթացքում

բացահայտվեցին քաղաքացիական (բառիս լայն առումով) իրավահարաբերությունների պաշտպանությանն ուղղված կառուցակարգերի բազմաթիվ անհատակություններ, արդիական նշանակության մի շարք իրավահարաբերությունների կարգավորման բացակայություններ և բացեր, հասարակական հարաբերությունների զարգացման միտումներին անհամապատասխանություններ: Մասնավորապես վճարելի վարույթում բացակայում էր վճարելի ատյանի կողմից ՀՀ 2015թ. Սահմանադրության փոփոխություններով ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու գործառույթից բխող իրավանորմեր, որը լրացվեց նոր ՔՂՕ-ում և շահագրգիռ անձինք հնարավորություն ստացան վճարելի բողոք ներկայացնելու նաև այս հիմքով (ՔՂՕ 394 հոդվածի 3-րդ մաս):

2. Վճարելի վարույթը ՀՀ բարձրագույն դատական ատյանում քաղաքացիական (նաև վարչական և քրեական) իրավահարաբերություններից բխող գործերի քննության կարգը, վճարելի դատարանի լիազորությունները և վճարելիության ակտի՝ վճարելի որոշման բովանդակությունը սահմանող նորմերի համակցություն է, խախտված կամ վիճարկվող քաղաքացիական իրավունքների պաշտպանության վերջնական փուլ, որում ստուգվում են վերաքննիչ դատարանի դատական ակտերի օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը առավել որակյալ դատական կազմով, քան գործերի քննության նախորդ փուլերում:

3. Այննայս է, որ արդարադատության մատչելիության ապահովումը պահանջում է սահմանել լրացուցիչ դատավարական երաշխիքներ սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անձանց համար: Այդպիսի քաղաքացիներն առաջին հերթին զրկված են դատարանում անձամբ գործ հարուցելու իրավունքից, երկրորդ հերթին՝ հնարավորություն չունեն անձամբ մասնակցելու դատական նիստին: Մեր կարծիքով կարելի է նման անձանց թվին դասել նաև ազատությունից զրկվելու ձևով պատիժ կրող անձանց, և նրանց, ում նկատմամբ վարույթ է հարուցվել հոգեբուժարանում հարկադիր հոսպիտալացման մասին, ինչպես նաև հաշմանդամներին և անչափահասներին:

3.1 Ուսումնասիրության արդյունքներից էլնելով, մենք անհիմն ենք համարում այն անձանց բողոքարկման իրավունքից զրկելը (ՔՂՕ 389 հոդվ.), ովքեր չեն ներգրավվել (նույնիսկ իրագել չեն եղել) գործի քննությանը, բայց դատարանն իր որոշմամբ լուծել է նրանց իրավունքների և պարտականությունների հարցը: Մեր համոզմամբ ՔՂՕ-ն պետք է վերաքննիչ ակտի բողոքարկման հնարավորությունն տա նաև գործին մասնակցող այն անձանց, ում առաջին բողոքով վճարելի դատարանն արդեն որոշում է կայացրել, եթե, իհարկե, այդ անձն առաջ է քաշում նոր հիմնավոր փաստարկներ: Մի խոսքով, ՔՂՕ-ում պետք է ընդլայնել վերաքննիչ դատական ակտերի բողոքարկման թե՛ օբյեկտների և թե՛ սուբյեկտների ցանկը:

4. Ստենախոսի կարծիքով շտկումների, երկարաձգումների և բարելավումների կարիք ունեն նաև վճարելի բողոքարկման, դրանց վերաբերյալ բողոքները վճարելի դատարանի կողմից վերադարձնելու, այդ ժամկետների բացթողման հիմքերը հարգելի համարելու, ժամկետների վերականգնմանը վերաբերող որոշումների բողոքարկման հնարավորության, վճարելի բողոքի ձևական սխալները շտկելու և վճարելի բողոքը կրկին ներկայացնելու, բողոքի՝ վարույթ ընդունումը մերժելու, վճարելի բողոքը գործին մասնակցող անձանց միջնորդությամբ դատական նիստում քննելու հարցերը, որոնց

առնչությամբ պետք է անհրաժեշտ փոփոխություններ կատարել ՔՂՕ 119, 361, 391, 394, 395
և 401-րդ հոդվածներում:

4.1 Առաջարկվում է ՔՂՕ 391 հոդվածի 1-ին մասով սահմանված վճարեկ բողոքարկման մեկամսյա ժամկետը սահմանել 2 ամիս, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված երեքամսյա ժամկետը՝ 6 ամիս, որը կօգնի վճարեկ բողոքներն առավել մանրագնիս և հիմնավորված նախապատրաստելուն ու վճարեկ ատյան ներկայացնելուն:

Այս առաջարկն ընդունելու դեպքում ՔՂՕ 391-րդ հոդվածը կստանա հետևյալ տեսքը.

«Հոդված 391 Վճարեկ բողոք բերելու ժամկետը.

1. Վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճարեկ բողոք կարող է բերվել այդ ակտի հրատարակումից հետո երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

2.....

3. Գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, իրավունք ունեն վճարեկ բողոք բերելու՝ սկսած այն օրվանից վեց ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ այդ դատական ակտի կայացման մասին»:

5. ՔՂՕ 395-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ բողոքում առկա թերությունները շտկելու և վճարեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: Ելնելով համապատասխան ժամկետում գործողությունների կատարման հնարավորությունից, գործողությունների կատարման ժամանակ ծագող հնարավոր խոչընդոտներից, օբյեկտիվ այլ գործոններից (օրինակ՝ սուբյեկտի առողջական վիճակը, կույթական դրությունը, փաստաբան (ներկայացուցիչ) չունենալը և այլն), առաջարկում ենք **բողոքում առկա թերությունները շտկելու և վճարեկ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանել մինչև երկամսյա ժամկետ:**

5.1 Վճարեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելու համար ՔՂՕ 397-րդ հոդվածով սահմանված է գործը վճարեկ դատարանում ստանալու օրվանից 3 ամսվա ընթացքում, որը մեր կարծիքով ողջամիտ չէ, քանի որ վերը նշված ՔՂՕ 395 և 396 հոդվածներով որոշում կայացնելու համար սահմանված է գործը վճարեկ դատարանում ստանալու օրվանից 1 ամսվա ընթացքում, և այս դեպքում նույնպես վճարեկ դատարանը իրականացնում է նույնաբնույթ գործառույթ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, առաջարկում ենք փոփոխել և վերախմբագրել ՔՂՕ 397-րդ հոդվածը, այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 397 Վճարեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը

1. **Վճարեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են վճարեկ բողոքը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու կամ առանց քննության թողնելու հիմքերը:**
2. **Վճարեկ դատարանը պետք է հիմնավորի վճարեկ բողոքում վկայակոչված վճարեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 394-րդ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:**
3. **Վճարեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճարեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճարեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում»:**

6. ՔՂՕ 398-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործին մասնակցող անձն իրավունք ունի ներկայացնելու վճարեկ բողոքի պատասխան վճարեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճարեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն

ստանալուն հաջորդող 15-րդ օրը: Հասկանալի է, որ մրցակցային դատավարության զարգացման համար կարող է էական նշանակություն ունենալ բողոքի պատասխանին կից փաստաթղթերի և ապացույցների պատճենների տրամադրումը գործին մասնակցող անձանց: Եվ քանի որ հողվածում չի հիշատակվում բողոքին կցված ապացույցների մասին, որոնք կհիմնավորեն վճարել բողոքի պատասխանը, ուստի առաջարկվում է ՔԴՕ 398-րդ հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն և լրացում՝ հետևյալ շարադրանքով.

«Գործին մասնակցող անձն իրավունք ունի վճարել բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում իր պատասխանը՝ կից ապացույցներով ուղարկելու վճարել դատարան և գործին մասնակցող անձանց»:

7. ՔԴՕ 404-րդ հոդվածի համաձայն վճարել դատարանը վերաքննիչ դատական ակտը վերանայում է միայն վճարել բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Մեր կարծիքով՝ վճարել դատարանին պետք է իրավունք վերապահել դուրս գալու վճարել բողոքի և դրա փաստարկների սահմաններից և դատական ակտն ստուգել դրա ողջ ծավալով, երբ վճարել դատարանը համոզվում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի նորմերի էական խախտումներ, քանի որ այս դեպքերում գործը լրացուցիչ քննության վերադարձնելն անհարկի կերպով երկարաձգում է խախտված կամ վիճարկվող իրավունքների վերականգնումը և լրացուցիչ ապացույցների ու դրանց քննության անհրաժեշտություն չկա: Այս կապակցությամբ պետք է լրացուցիչ կետ մտցնել ՔԴՕ 404-րդ հոդվածում: Արդարադատության մատչելիության սկզբունքից ելնելով դատարանը պետք է գործը լրացուցիչ քննության վերադարձնի միմիայն որպես բացառություն, երբ ինքն անձամբ հնարավորություն չունի վերացնել նյութական իրավունքի էական սխալները և բացթողումները: Այս նույն կապակցությամբ պետք է լրացնել նաև վճարել դատարանի լիազորությունների վերաբերյալ ՔԴՕ 405 հոդվածի 1-ին մասը, որի համաձայն վճարել դատարանն իրավունք կստանա բեկանել առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ գործը չհանձնելով լրացուցիչ քննության, երբ սխալ է թույլ տրվել նյութական իրավունքի մեկնաբանման կամ կիրառման հարցում:

8. Դատական պրակտիկան վկայում է, որ դատարանը շատ հաճախ քաղաքացիական և վարչական գործերի քննության ընթացքում կազմակերպությունների ու պաշտոնատար անձանց գործողություններում հայտնաբերում է օրինակնության խախտումներ՝ պաշտոնական դիրքի չարաշահումներ, վատնումներ, աշխատանքային օրենսդրության աղաղակող ռոնահարումներ և այլն, որոնք այսօր չեն բողոքարկվում նաև դատախազի կողմից: Դա հավասարապես վերաբերում է նաև առաջին և վերաքննիչ ատյանների դատարաններին, որոնք շատ հաճախ անհիմն կերպով ձգձգում են գործերի քննության ողջամիտ ժամկետները: Գտնում ենք, որ պետք է օրինակնության վերը նշված և գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտումների դեպքում վճարել դատարանին իրավունք վերապահել կայացնելու մասնավոր որոշումներ: Այդպիսի

ինստիտուտն իրեն արդարացրել է նաև նախորդ օրենսդրության կիրառման երկարատև պրակտիկայում և ներկայումս էլ գործուն կերպով կիրառվում է ՀՀ քրեական դատավարությունում:

9. Լրացման կարիք ունեն նաև ՔԴՕ 363 և 365-րդ հոդվածներում թվարկված դատավարության իրավունքի նորմերի խախտումների և սխալ կիրառման ցանկերը, որոնցով կրնալայնվեն անհիմն դատական ակտերի բեկանման հիմքերը, դատական ակտերի՝ դատական նիստում չպարզված հանգամանքների չհամապատասխանելը: Իսկ սրանք դատական պաշտպանության դիմող անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության լրացուցիչ, բայց էական երաշխիքներ են:

Ատենախոսական հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Վճռաբեկ բողոքարկումը որպես դատական պաշտպանության իրականացման երաջխիք // Сборник 8 Годичной конференции РАУ, часть 1. Ер. Изд. РАУ, 2014г. с. 179 – 184:
2. Վճռաբեկ վարույթի ծագումը և զարգացումը // Դատական իշխանություն, հոկտեմբեր – նոյեմբեր, N 10-11 / 184-185, Երևան, 2014, էջ 74-81:
3. Վճռաբեկ վարույթի սուբյեկտները // Вестник РАУ, N 1 (19) / Ереван, 2015. с.111-121.
4. Վճռաբեկ բողոքարկման օբյեկտները // Вестник РАУ, N 2 (20) / Ереван, 2015, с. 45-52.
5. Վճռաբեկ բողոքարկման ժամկետները // Вестник РАУ, N 3 (21) / Ереван, 2015, с. 81-87.
6. Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը // Օրինականություն, N 89. / Երևան, 2015, էջ 37-41:
7. Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը (Վճռաբեկ դատարանում գործերի քննության սահմանները) // Օրինականություն, N 90, Երևան, 2015, էջ 47-51:
8. Վճռաբեկ դատարանի կողմից գործը դատական քննության նախապատրաստելը // Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր, 9-10 / 195-196, Երևան, 2015, էջ 104-107:
9. Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի բեկանման հիմքերը // Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր, 11-12 / 197-198, Երևան, 2015, էջ 102-111:
10. Վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգը // Արդարադատություն, դեկտեմբեր 4 (31), Երևան, 2015, էջ 33-39:
11. Վճռաբեկ ինստիտուտի վերականգնման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում // Сборник 9 Годичной конференции РАУ, часть 2. Ер. Изд. РАУ. 2015г. с. 381-389:
12. Վճռաբեկ դատարանի լիազորությունները // Օրինականություն, N 91, Երևան, 2016, էջ 34-40:
13. Վճռաբեկ վարույթի նպատակները և խնդիրները ըստ ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի // Օրինականություն, N 107, Երևան, 2018, էջ 51-56:
14. Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը ըստ ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի // Դատական իշխանություն, սեպտեմբեր-հոկտեմբեր 9-10 / 243-244, Երևան, 2019, էջ 99-109:

НАЗАРЕТЯН АРТУР СРАПОВИЧ
Проблемы кассационного производства
в гражданском процессе РА
Резюме

Настоящая диссертационная работа посвящена одному из важнейших институтов гражданского судопроизводства РА – кассационному производству, которое было актуально начиная с древних веков и было восстановлено после распада советской власти в РА и, с точки зрения еще одной проверки законности и обоснованности составленных апелляционным судом судебных актов наиболее качественным составом суда, актуально также в настоящем.

Автор, посредством изучения отечественной и зарубежной (особенно российской) юридической литературы и анализа законодательства, применяя также метод сравнительного права (компаративный), изложил актуальность, научную новизну темы, обосновал ряд предложений, направленных на совершенствование законодательства, регулирующего кассационное производство гражданского судопроизводства, которые относятся к понятию кассационного производства, историческому формированию этого производства (генезису), предпосылкам экономического, политического, правового, культурного восстановления этого института после приобретения независимости РА, расширению объектов и списка субъектов кассационного производства, срокам кассационного обжалования, подаче кассационной жалобы, его принятию в производство, отклонению его принятия, его подготовки к судебному рассмотрению, особенностям судебного рассмотрения, полномочиям кассационного суда, основам отмены апелляционных судебных актов и др.

Научная новизна исследования состоит в том, что нами была сделана попытка подвергнуть комплексному анализу процессуальные особенности рассмотрения гражданских дел в Кассационном суде, с точки зрения доступности правосудия в кассационной стадии, и разработать и представить теоретические и практические решения существующих в этой сфере или связанных с ней других сферах задач.

На основании теоретических разработок дореволюционной процессуальной мысли, комментариев советских и современных процессуальных положений, выполнено комплексное изучение относительно проблемы пересмотра судебных актов в гражданском судопроизводстве с точки зрения совершенствования законодательства, регулирующего процесс пересмотра, были обоснованы предложения по совершенствованию норм, регулирующих правовой процесс кассационного производства в гражданском судопроизводстве, учитывая международные правовые требования права судебной защиты.

По мнению автора настоящей работы, научную новизну содержат также представленные к защите положения, часть которых до принятия нового ГПК мы уже опубликовали и которые законодатель принял, и в случае внесения остальной их части, по нашему мнению, будут улучшены кассационный институт и судебная практика гражданского судопроизводства РА.

Относительно каждого из указанных вопросов диссертант сделал свои собственные предложения, касающиеся усовершенствованию соответствующих законодательных положений. В заключении содержатся основные теоретические и практические выводы, полученные в процессе исследования. Он обосновал эти предложения, к предложенным добавил новые основополагающие предложения, которые относятся к предоставлению права вынесения нового судебного акта кассационным судом, если нижестоящий суд допустил ошибку при применении материального права или комментирования, а также с целью обеспечения доступности правосудия определить дополнительные процессуальные гарантии для тех лиц, которые нуждаются в социальной защите.

Основные положения диссертации были изданы в 14 научных статьях.

Диссертант использовал отечественную и зарубежную (особенно русскую) литературу, и иностранные комментарии законодательных норм, касающихся обсуждаемого вопроса.

The Problems of the Cassation Proceedings in the

Civil Procedure of the RA

Summary

The work of this thesis is dedicated to one of the most important institutions of RA civil procedure: the cassation proceedings which was actual since old centuries and after the USSR collapse it was restored and is actual even nowadays, the legality and validity of the decisions adopted by the Appeal Court once again to verify the legal point of view by the most qualified staff.

The author, based on the study and analysis of national and foreign (especially Russian) legal literature and legislation, applying also the comparative-legal (comparative) method, elucidated the relevance of the topic, the scientific innovation, presented about a dozen proposals for the improvement of legislation on the civil procedure and cassation proceedings which refer to the concept of the cassation proceedings, the historical formation (genesis) of these proceedings, after the independence of RA the economic, political, legal and cultural background of the recovery of that institution, the expansion of the list of subjects and objects of the cassation proceedings, the deadlines of the cassation appeal, applying the cassation appeal, adopting a proceeding, rejecting the adoption, to arrange it for trial, judicial investigations, the powers of the Cassation Court, the grounds for quashing the appeal court acts, etc.

The scientific novelty of the research is that we have attempt has been made to make a comprehensive analysis of the procedural features of the civil cases in the Cassation Court from the view point of access to justice and develop and present the theoretical and practical solutions to the present problems in this sphere or other related speres.

Based on the theoretical developments of the pre-revolutionary judiciary thought, the soviet and modern procedural interpretation, a comprehensive study was conducted on the issue of reviewing judicial acts in the civil proceedings on the point of improving the legislative regulation, the proposals for improving the norms have been sustained to regulate the legal procedure of the cassation procedure in the civil proceedings, taking into consideration the international legal requirements of the judicial protection law.


According to the author's work, there is a scientific novelty also in the provisions of the defense, some of which we have already published before the adoption

of the new CPC and which have been adopted by the legislator, and in the case of the introduction of the rest, in our opinion, the Cassation Institute of the Armenian Civil Procedure and judicial practice will be improved

The candidate had his own proposals for each mentioned question for improving the legislative relevant provisions. The main theoretical and practical conclusions which are the results of the research are contained in the summary. He substantiated the proposals, added new basic proposals which relate to the provision of the right to make a new a court act that by the Appeal Court if the lower court allowed mistake of the application or interpretation of substantive law, also to determine additional legal guarantees of available juridical support for persons who need social defense.

The main provisions of the thesis (dissertation) were published in 14 scientific articles.

The candidate used native, foreign, especially Russian literature also multilingual commentaries which were connected to the legislative regulations of the discussed question.

A handwritten signature in red ink, appearing to be in Armenian script, is written over a horizontal line. The signature is stylized and includes a large flourish at the end.

